Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Պատասխանատու վերաբերմունքի խթանումը օտար լեզուներով նախագծային ուսուցման գործընթացում

Աշխատանքի ղեկավարներ՝Լ. Սաֆարյան,Ռ. Կարապետյան

Ուսուցիչ՝ Ք. Հարությունյան

Դպրոց՝ Սարդարապատի միջն. Դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն....3
Հետազոտության նպատակները....3
Բնությունն ամեն ինչ ի մասին այնպես է հոգացել, որ ամեն տեղ սովորելու բան գտնես։ (Լեոնարդո դա Վինչի)....4
Մի ամաչեք չափահաս տարիքում սովորել ։ Ավելի լավ է սվորել ուշ քան երբեք։ (Մարկ Տվեն)....4
Գրականական ակնարկ....5
Որպես ուսուցման հիմնական գործիքներ կարող ենք առանձնացնել նաև....6
Փորձարարական հետազոտություն....10
Խմբի նկարագիր....10
Փորձարարական դաս 1....11
Եզրակացություն....12
Օգտագործված գրականության ցանկ....13
Հավելված....14

Ներածություն

Վերջին տարիներին կրթության ոլորտը դիտվում է որպես մարդասիրական գործունեություն, որը հիմնված է ժողովրդավարության և հանդուրժողականության սկզբունքների վրա: Ուսուցչի աշխատանքի հիմնական նպատակներից է ստեղծել պայմաններ երեխաների ինքնուրույն կամ մեծահասակի օգնությամբ, նորությունների բացահայտմամբ, ստեղծագործական ներուժի ակտիվացման կարողությունների զարգացման համար:

Հաշվի առնելով դա՝ ընտրվել է հետազոտական թեման՝ «Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում»:

Հետազոտության առարկան - հանրակրթական հաստատությունում ուսուցչի գործունեությունն է աշակերտների ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացման գործում:

Ուսումնասիրության նպատակն է - սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ :

Աշակերտական խմբակային գործունեությունը և կոլեկտիվ աշխատելու մեթոդները մանկավարժորեն արդյունավետ են դառնում «մեկ թիմ» ձևավորելիս, աշակերտների վրա կրթական ազդեցություն գործադրելիս, համատեղ գործունեություն կազմակերպելիս և աշակերտների ստեղծագործական կարողությունները բացահայտելիս:

Ուսուցչը որպես ղեկավար, գործունեություն իրականացնելու ընթացքում աշակերտական կոլեկտիվը ղեկավարելու համար առաջնահերթություն է համարվում կենտրոնանալ սովորողների ներուժի և կարողությունների զարգացման վրա, նրանց վրա համապատասխան ազդեցություն ունենալ, ստեղծել դրանց ստեղծագործ

Հետազոտության նպատակները

1. Ձևավորել ժամանակակից տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու տարրական կարողություններ, ակտիվացնել հետաքրքրությունները

2.Զարգացնել ինքնուրույն ստեղծագործական կարողությունները՝ որոնողական աշխատանքների միջեցով

3. Հիմնավորել աշակերտական խմբի ղեկավարման գործում ուսուցչի գործունեության մեջ ղեկավարության ընդգրկվածության մակարդակները.

4.Բացահայտել ուսուցչի աշխատանքում գաղափարների և մանկավարժական մեթոդների կիրառման ներուժը աշակերտական խմբի ղեկավարման գործում:

ական իրականացման իրավիճակներ:

Բնությունն ամեն ինչ ի մասին այնպես է հոգացել , որ ամեն տեղ սովորելու բան գտնես: (Լեոնարդո դա Վինչի)

Մի ամաչեք չափահաս տարիքում սովորել : Ավելի լավ է սվորել ուշ քան երբեք: (Մարկ Տվեն)

Գրականական ակնարկ

Այսօր խմբակային ուսուցման մեթոդերը լայն տարածում է ստանում հանրակրթական ուսումնական գործում: Այն ենթադրում է աշակերտների և ուսուցիչների միջև երկխոսության շփման համար հարմարավետ պայմանների ստեղծումից: Նորարարական մեթոդների շնորհիվ խմբի բոլոր անդամները ներգրավված են ուսման գործընթացում: Այսպես են նրանք աշխատում միասին: Սա թույլ է տալիս հասնել լիարժեք փոխըմբռնման և փոխազդեցության աշակերտների միջև: Այս մոտեցումը թույլ է տալիս յուրաքանչյուրին զգալ իրենց հաջողությունը, ցույց տալ իրենց խելացիությունը և անհատական ներդրում ունենալ նյութի ուսումնասիրության մեջ: Նման տեխնիկայի օգտագործումը ուսուցիչին և աշակերտին հավասար մասնակիցներ է դարձնում: Ուսումնասիրության ամենատարածված առարկան, որտեղ կիրառվում է փոխներգործում մթոդները , համարվում է գերմաներենն **առկամ**Գերմաներեն լեզվի ինտերակտիվ դասընթացը հնարավորություն է տալիս բոլոր մասնակիցներին շփվել միմյանց հետ, պաշտպանել իրենց տեսակետը և կայացնել որոշումներ: Այն զարգացնում է հաղորդակցման հմտությունները:

Քննարկումը մեթոդ է, որի ընթացքում քննարկվում են որոշ խնդիրներ, որոնց մասին տեղյակ են աշակերտները: Դասն ամբողջությամբ անցկացվում է օտար լեզվով: Սա աշակերտներին ստիպում է մտածել գերմաներեն, ակտիվորեն օգտագործել պասիվ բառապաշարը:

Փոքր խմբային աշխատանքը մեթոդ է- որը ներառում է խմբի բոլոր անդամներին: Այս մոտեցումը թույլ է տալիս նույնիսկ ամենաամաչկոտ աշակերտին բացվել և ցույց տալ իր ունակությունները:

Դերախաղը - նախկինում սովորած նյութը ամրապնդելու համար օգտագործվող մեթոդ է: Այն հնարավորություն է տալիս գործնական փորձ ձեռք բերել գործնականում նոր կառուցվածքների և բառերի օգտագործման մեջ: Դասընթացի ընթացքում մասնակիցները կարող են ստեղծագործաբար արտահայտվել `հագնելով

մեկ այլ անձի դիմակ, որը գտնվում է այլ վայրում և նույնիսկ այլ երկրում:

Անավարտ պատություն կամ հեքիաթ -այս մեթոդի հիմանական նպատակներից է շարունակել պատմությունը կամ հեքիաթը՝ օգտագործելով սովորած բառապաշարը: Այս կերպ կարելի է զարգացնել աշակերտի ինքնուրույն և ստեղծագործական միտքը:

Անավարտ նախադասություն- այս մեթոդի հիմնական նպատակը ուսուցչի կողմից սկսված նախադասությունը շարունակելու և լրացնելու կարողությունն է: Այս կերպ Դուք ավելի հաջող կարող եք սովորել խոսել և մտածել գերմաներեն:

Հեռավար ուսուցման համակարգը իրական ժամանակում վերապատրաստման դասընթաց անցնելու միջոց է ինտերնետի միջոցով: Վերոնշյալ բոլոր տեխնիկաները կարող են օգտագործվել այնտեղ: Ինտերակտիվ ուսուցումն օգնում է մարդկանց խոսել և մտածել օտար լեզվով: Գերմաներեն սովորելու ժամանակ ժամանակակից մեթոդների օգտագործումը զարգացնում է մասնակիցների հաղորդակցման հմտությունները, հեռացնում է ներքին ճնշումը, ցույց է տալիս, թե ինչպես աշխատել թիմում:[1]

Որպես ուսուցման հիմնական գործիքներ կարող ենք առանձնացնել նաև

Մտաբերում մեթոդը -Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որմտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է, իմացածը դուրս բերելը: Հետաքրքիր է, որ«կրթություն» բառի լատիներեն «Education» համարժեք բառի արմատը՝ «Educe», թարգմանաբար նշանակում է «դուրս բերել»: Ուսուցման գործընթացում մենք հաճախ ավելի կարևորում ենք գիտելիք տալը: Բայց պարզվում է, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է, որ հայերեն կարող ենք կոչել մտաբերում:.

Օրինակներով ուսուցում -ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան: Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով: Երկրորդ՝ շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի

[1] Яснопольская, Д.О. Менеджмент Текст. / Д.О. Яснопольская, М.М. Зонис. М., 2005

լուծման որոշ քայլեր։Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս։

Պատկերի և տեքստի համադրում - Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են։ Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով։ Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ։

Մետաիմացություն - Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից։ Այս երևույթը կոչվում է մետաիմացություն։ Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը։

Համագործակցային ուսուցման մեթոդ - Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է։ Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ։Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը։[2]

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

- Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ։ Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն։ Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը։ Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին։
- Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար։

[2] Езопова, С.А. Менеджмент в дошкольном образовании Текст. / С.А. Езопова. М.: Академия, 2003. - 309 с

- Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
- Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:
- Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Նախագծային ուսուցումը հիմնված է այն ենթադրության վրա, որ սովորողն իր գիտելիքները ձևավորում (զարգացնում) է՝ ակտիվորեն մասնակցելով ճանաչողական գործընթացին: Այս մտավոր գործընթացի համար անհրաժեշտ է նաև, որ սովորողը համագործակցի մյուսների հետ: Խմբային աշխատանքի միջոցով սովորողները հնարավորություն ունեն իրական կյանքին նմանեցված իրավիճակներում որոնելու իրական խնդիրների լուծումներ՝ օգտագործելով տարբեր ձևեր և տարատեսակ եղանակներ:

Նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ են մեդիա պայմաններ, որոնք հնարավորություն կտան սովորողներին համագործակցելու և օգնելու միմյանց:

Նրանք կարող են օգտվել մի շարք գործիքներից և տեղեկատվության աղբյուրներից՝ իրենց խնդիրները լուծելու և նպատակին հասնելու համար:

Նախագծային մեթոդը համագործակցային բազմաթիվ մեթոդներից մեկն է: Այն յուրօրինակ է և անվերջ, քանի որ խնդիրները վերացական հասկացություններ չեն, այլ վերցված են իրականությունից: Չկա երկու նմանատիպ նախագիծ, քանի որ մասնակից սովորողները, դասավանդողները և պատճառները մշտապես տարբեր են:

Նախագծային ուսուցման ժամանակ կենտրոնանում ենք առօրյա կյանքի խնդիրների վրա և կարևորում մասնակիցների հմտությունները և ակտիվ մասնակցությունը:

Այն իրականացնելն արդյունավետ, հետաքրքիր, դարձնելու համար կիրառում ենք տարբեր հնարներ, միջոցներ, բաղադրիչներ:

Նախագծերի կարևոր բաղադրիչներից են՝

- Համագործակցությունը ,
- նոր կարողությունների ձեռքբերումը,
- ստեղծագործական-երևակայության կարողությունների զարգացումը
- ճանաչողական-հետազոտական հմտությունների զարգացումը:

Նախագիծն իրականացնելիս հաշվի ենք առնում սովորողի տարիքայյին առանձնահատկությունները, կարողությունները, որպեսզի առաջ քաշած խնդիրներն առավել արդյունավետ լուծումներ ստանան: .

Նախագծի իրականացման ժամանակ բոլոր սովորողները հավասարապես մասնակցում են առաջադրված խնդիրների լուծմանը՝ ավարտին ստեղծելով ուսումնական նյութեր, տեսանյութեր, ֆոտոպատումներ:[3]

[3] https://avetiqyanhasmik.wordpress.com

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիր

Հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Արմավիրի մարզի Սարդարապատի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը դժվարանում կամ խուսափում է դասապրոցեսին արտահայտվել գերմանաերենով: Աշակերտների գերմաներենով արտահայտվելու կարողությունը զարգացնելու նպատակով որոշեցի օգտվել համագործակցային ուսուցման մեթոդից, ինչը կնպաստի, նրանց ինքնուրույն խոսք կառուցելու կարողության զարգացմանը և կարդացի ուսումնական ծրագրի արդյունավետ յուրացումը:Այս դասարանում սովորում են 16 աշակերտ՝ 13 աղջիկ և 3 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Գերմաներենն անցնում են շաբաթական 4 ժամ: Դասարանից ընտրել եմ միջին կարողություններ ունեցող 7 աշակերտի որոնք, որոնք խուսափում էին ներգրավվել դասապրոցեսին , ազատ արտահայտվելու դժվարության պատճառով:Նրանց համար դասը կազմակերպել եմ համագործակցային ուսուցման մեթոդով և արդյունքը գնահատել անհատական թեստերի միջոցով, իսկ մնացած աշակերտների հետ կատարել եմ տարբեր բնույթի աշխատանքներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարողությունները և հմտությունները:

Փորձարարական դաս 1

Այսօրվա դասի թեման էր «Eine Sprachreise nach England»: Դասաժամը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքներ՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները, աշակերտները ստացան իրենց հարցերի պատասխանները:

Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփեցինք «Eine Sprachreise nach England» թեման, ստուգելով աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ, այնուհետև հետազոտվող աշակերտները կազմեցին խումբ կամ զույգ և քննարկեցի իրենց համար առանձնացված հանձնարարությունները: Աշակերտները հանձնարարությունը բաժանեցին իրար մեջ և այն ներկայացրեցին երկխոսության միջոցով: Միևնույն ժամանակ մյուս աշակերտները տեքստին համապատասխան կազմեցին հարցական նախադասություններ տարբեր ժամանակաձևով:Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղորդումներ: Հետազոտվող աշակերտներին հանձնարարվեց «Eine Sprachreise nach England»-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնել սահիկաշարի տեսքով կամ պլակատի տեսքով:Նոր դասը վերաբերվում էր «Perfekt» թեմային, որը հաղորդվեց աշակերտներին կարճ բացատրությամբ՝ ստեղծելով միջառարկայական կապ հայոց լեզվի հետ: Դասի հաղորդման ժամանակ աշակերտները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցերը, տրվեց լրացուցիչ բացատրություններ:

Դասն ավարտվեց ամփոփումով և տնային աշխատանքի հանձնարարումով:

Եզրակացություն

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում ապահովելու համար՝ անցկացվեց 1 տարբերակված դասեր, որի ժամանակ 7միջին առաջադիմության տեր աշակերտներ կատարեցին խմբային աշխատանքներ։ Աշակերտների կարծիքով խմբային աշխատանքը շատ ավելի հետաքրքիր է և մոտիվացնող, քանի որ այն հնարավորություն է տալիս աշխատանքի ընթացքում իրար միավորել խմբի բոլոր մասնակիցները գաղափարները և արդյունքում հետաքրքիր աշխատանք ստանալ։ Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման և ներգրավվածութան բարձրացման համար համագործակցային ուսուցումը լավագույն մեթոդներից մեկն է։ Այն հնարավորություն է տալիս աշակերտին ավելի լավ ընկալել թեման, նաև դրա միջոցով աշակերտը կարող է իր միտքը ավելի վստահ արտահայտել։

Օգտագործված գրականության ցանկ

1. Langenscheidt / Swantja Ehlers / Lesen als Verstehen / Arbeit mit literarischen Texten /2010
2. Яснопольская, Д.О. Менеджмент Текст. / Д.О. Яснопольская, М.М. Зонис. М., 2005.
3. Езопова, С.А. Менеджмент в дошкольном образовании Текст. / С.А. Езопова. М.: Академия, 2003. - 309 с.
4. https://hy.wikipedia.org/wiki/Համագործակցային_ուսուցում
5. https://avetiqyanhasmik.wordpress.com

Հավելված

Առարկա	Ամսաթիվ	Կիսամյակ	դասարան
		1-րդ	9-րդ
Աշակերտների քանակը	Աղջիկ 13 տղա 3		
Թեմա	Prefekt		
Օգտագործվող նյութեր	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան		
Դասի նպատակը	Իմանալ վաղակատար ժամանակաձևը հայոց լեզվից Հասկանալ վաղակատար ժամանակաձևի օգտագործումը գերմանաերենում Իմանալ վաղակատար ժամանակաձևը և օգտագործել նախադասության մեջ		
Վերջնարդյունք	Սովորողը պետք է կարողանա		

	Բայի վաղակատար ժամանակաձևը ճիշտ կիրառել նախադասության մեջ Վերարտադրել տեքստը բայի վաղակատար ժամանակաձևով			
Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ		Նպատակներին հասնելու ռազմավարություն		
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում		Նախատեսում եմ խմբային աշխատանք՝ արձանագրելով թե յուրաքանչյուր խմբի, թե յուրաքանչյուր սովորողներից դինամիական		
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեությունՈւսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Մուտք ներկա բացակա/Յր/	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի հատվածները	Ո±րքան ժամանակ է Ջոնը մնացել Անգլիայում: ՈՒ±մ հետ է գնացել Անգլիա,	

սկիզբ/5-7ր/	Աշակերտները տալիս են անհասկանալի հարցերը, լսում պատասխանները, անհրաժեշտության դեպքում տետրում կատարում նշումներ։	Հարցերի միջոցով փորձել հիշեցնել նախորդ դասերին անցածը։ Ուղղորդող հարցադրումների օգնությամբ բոլոր աշակերտներին ներգրավել դասապրոցեսին։	Ի±նչ են տեսել Անգլիայում, Ի±նչ է պատահել ուղևորության ընթացքում։	Հարցադրումների մեթոդ

Ընթացք /25-30ր/	Լսում և կատարում են հանձնարարություններ։ Բաժանել թերթիկներ հանձնարարել տեքստին վերաբերող հարցեր կազմել , օգտագործելով բայի վաղակատար ժամանակաձևը	Նոր նյութի հաղորդումից հետո բոլոր աշակերտներին ցուցաբերել անհատական մոտեցում դասարանում, հետևել աշակերտների աշխատանքին, անհրաժեշտության դեպքում տալ համապատասխան ուղղություն։		Կարճ բացատրություն ստեղծելով միջառարկայական կապ հայոց լեզվի հետ

	Աշակերտները ներկայացնում են իրենց կատարածաշխատանքները: Պարզաբանում են անհասկանալի հարցերը և կատարում այլ առաջադրանքներ:	Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հարցերի համար: Փորձարարական խմբի աշակերտներին հանձնարարել թեմայի վերաբերյալ պատրաստել սահիկ կամ պլակատ:		
Ավարտ 5 րոպե		Հարցերի միջոցով կատարել ամփոփում, հստակեցնել անհասկանալի հարցերը		Ձնագնդի մեթոդ Խմբային հետազոտության մեթոդ